

## Հիշողության ցեղասպանությունը

և

### Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հիմնադրությունները

*Միջազգային հարաբերությունների Պրոֆեսոր Բլիաս Կուսկուվելիսի ելույթը Հայոց ցեղասպանության հիշատակին նվիրված միջոցառմանը Վելիդիո Համաժողովների Կենտրոն, Ապրիլի 22, 2012թ.*

Մենք այսօր հավաքվել ենք այստեղ, որպեսզի արգելենք եւս մեկ ցեղասպանության իրականացումը, դա մեր ընդհանուր հիշողության ոչնչացումն է, բայց նաեւ հայտարարենք մեր բացասական դիրքորոշումը ամեն տեսակի բռնության եւ ժողովրդավարության մտքի խոչընդոտների դեմ: Մենք այստեղ ենք եւս մեկ, բայց տարբեր «Չմոռանանք»-ի համար, որը չի վերաբերում միայն անօրինական ներխուժմանն ու գրավմանը նույն կողոպտչի կողմից, այլ մարդկության դեմ այդ հանցագործությունը դատապարտելու համար: Ես այսօր այստեղ եմ ձեր կորուստների առաջ մեծ ակնածանքով, այստեղ եմ, որպեսզի խոնարհվեմ ձեր ցավի առաջ եւ ձեր գրեթե հարյուրամյա պայքարի առաջ:

Շնորհակալություն հայտնելով Հունաստանի Հայ Դատի հանձնախմբին, որ ինձ համար մեծ պատիվ անելով հրավիրել են մասնակցելու այս արարողությանը, ես իմ ելույթում, որ վերաբերում է հիշողության հանդեպ հարգանքին, նախ կքննարկեմ ոճրագործության ժամանակագրությունը: Այնուհետեւ կանդրադառնամ հիշողության ցեղասպանություն իրականացնելու թուրքական ջանքերին: Երրորդ մասում պատիվ ունեմ ներկայացնելու մասնավորապես Հայկական սփյուռքի պայքարը: Եւ վերջում, ես մշակել եմ միջազգային մակարդակում Հայկական հարցի ռազմավարական ծրագրավորման որոշ գաղափարներ՝ ձեր հետագա գործունեությանը նպաստելու համար:

## 1. Սարսափի ժամանակագրությունը

Հայերի ցեղասպանությունը սկսվեց 1894-1896թթ. ժամանակահատվածի կոտորածներով եւ շարունակվեց մինչեւ 1909թ. Ադանայի իրադարձությունները, սակայն էլ ավելի արագացվեց Բալկանյան պատերազմների ընթացքում կոտորածներով եւ իր գագաթնակետին հասավ 1915թ.-ին:

1915թ. մարտի 26-ին սկսվում են ջարդերն ու հալածանքները Ջեյթունում՝ նպատակ ունենալով Օսմանյան կայսրությունում ոչնչացնել հայերին եւ քրիստոնյաներին: Դրան հետեւում է 1915թ.-ի ապրիլ 24-ի շաբաթ օրը:

Ձերբակալվում եւ անհայտ ուղղություններով «արտաքսվում» են Ստամբուլի հայ քաղաքական եւ հոգեւոր առաջնորդները, խորհրդարանականները, գործիչներն ու գրողները ...

Հայկական ծագում ունեցող զինվորականները զինաթափ են արվում եւ ուղարկվում են աշխատանքի գումարտակներ, որտեղ եւ ոչնչացվում են: Քաղաքներում եւ գյուղերում առաջին հերթին հավաքում են տղամարդկանց, առանձնացնում ընտանիքներից. նրանք հիմնականում սպանվում են իրենց բնակության վայրերից քիչ հեռու: Կանայք եւ երեխաները սկսում են իրենց մահվան երթը՝ դեպի Սիրիայի եւ Միջագետքի անապատները:

1916-ի վերջին ցեղասպանությունը տեղի էր ունեցել: Մասնակցել էին թուրքերը եւ քրդերը, որոնք, ինչպիսի՛ հեզնանք, այժմ նմանատիպ հետապնդումների տակ են թուրքական պետության կողմից:

Որպես անեծքի դեմ սփոփանք, Մերի պայմանագիրը նախատեսում էր ընդլայնված Հայաստան, որը տիրապետության տակ էր առնում նաեւ մերձծովյան տարածքը ... Դաշնություն ստեղծելու հուսահատ փորձից հետո: Բայց Առաջին համաշխարհայինում հաղթանակ տարածների կողմից ծրագրից հրաժարումից հետո եւ Քեմալի հետ մտերիմ հարաբերություններ հաստատելով՝ Լենինը (1920թ.) Հայաստանը խորհրդայնացնում է:

Այնուհետեւ, 1922թ.-ին Փոքրասիական ճակատը փլուզվում է: Հունաստանը պարտվում է: Լոզանի պայմանագրում «Հայաստան» կամ «հայկական» բառերը չեն էլ հանդիպում: Այսպիսով՝ Հայկական հարցը կարծես թե «փակված» է համարվում մարդկանց ոչնչացումով:

1915թ. ապրիլից մինչեւ 1916 թվականի վերջը Օսմանյան կայսրությունում 1.845.450 հայերից փրկվեց ընդամենը 600.000-ը, ոմանք՝ մահմեդականացման գնով: Նրանցից մոտ 250.000-ը կարողացավ փախչել Ռուսաստան, որտեղ նրանց մոտ կեսը մահանում է տարբեր պատճառներով:

Թուրքիայի կապիտուլյացիայից հետո դաշնակիցները գտել են մոտ 400.000 հայի՝ ցրված երկրի ծայրամասերով: Նրանց մեծ մասը, որոնք չէին զոհվել Փոքր Ասիայի ջարդերից, փախել էին Թուրքիայից 1922 թ.-ին՝ հույների հետ միասին: Այսօր ընդամենը 45.000 հայ է ապրում Թուրքիայում, հիմնականում Ստամբուլում:

Ցավոք, սրանք պարզապես խոսքեր են, որոնք փորձում են, բայց չեն կարող նկարագրել այդ դաժան եւ զանգվածային սպանությունը, ցեղասպանությունը: Չեն կարող արտահայտել նրանց տառապանքներն ու ցավը, ովքեր արտաքսվել են: Նրանք չեն կարող հասկանալ այն սարսափը, այն հուսահատությունը, որով լցվում է յուրաքանչյուր էակի միտքն ու հոգին, որը կոչվում է մարդ:

Հանցագործությունը կանխամտածված էր, արագացված եւ հիմնականում Գերմանական ռասիստական «գերմարդու» գաղափարով ոգեշնչված, ինչպես որ դա փոխանցվել էր Թուրքիային (որը դեռ տեսնում ենք մինչ օրս) այն ժամանակվա գերմանացի ռազմական խորհրդականներից:

Այս հանցագործությունը, ինչպես եւ մյուսները, որոնք հաջորդեցին 20-րդ դարում Թուրքիայի եւ Գերմանիայի կողմից իրականացված ցեղասպանություններին, իսկ վերջերս էլ նմանատիպ վայրագությունների ականատես եղանք Կամբոջայում եւ Ռուանդայում, կատարվել են աստծո ստեղծած բարձրագույն էակների կողմից: Ոչ մի

այլ էակ մեր երկրի վրա դեռ չի կատարել այն, ինչ մեզ այդքան մոտ մարդակերպ էակները:

Հայերի Ցեղասպանությունը միակը չէ, որ կատարվել է մեր հարեանների կողմից: Ցավոք՝ տեղի է ունեցել նաև Փոքր Ասիայի, Մեծովյան տարածաշրջանի եւ Արեւելյան Թրակիայի հույների ցեղասպանություն: Եվ կատարվել է նաև ասորիների ցեղասպանություն: Խոսքը հարավ-արեւելյան Փոքր Ասիայի քրիստոնյա ժողովուրդների մասին է, որոնք սպանվեցին է նույն ժամանակահատվածում եւ այն նույն պայմաններում, ինչպես հույների եւ հայերի դեպքում էր:

Այսինքն, մեր «լավ» հարեանները 20-րդ դարի վեց ցեղասպանություններից պատասխանատու են երեքի համար:

Այժմ գալիս եմ նրանց մերժողական քաղաքականությանը, հիշողության՝ ցեղասպանությանը:

## **2. Թուրքիան եւ մերժողական քաղաքականությունը**

Քեմալիստների «Նոր Թուրքիան» եւ այսօրվա իսլամիստները նույն հետեւողականությամբ եւ ինտենսիվությամբ հետեւում են նույն քաղաքականությանը՝ ցեղասպանության ժխտման քաղաքականությանը: Անկեղծորեն եւ չեմ հասկանում եւ ոչ էլ կարող եմ եզրակացնել, թե երկուսից որն է մեծագույն հանցագործությունը՝ հենց բուն հանցագործությունը թե՞ ուրացման քաղաքականությունը, եւ այսօր, 21-րդ դարում... Ցեղասպանություն թե՞ հիշողության սպանդ...

Եկեք շարադրենք փաստերը հերթականությամբ: Ցեղասպանության պատասխանատուները երբեք չեն պատժվել: Իհարկե դատապարտվել են հեռակա կարգով: Նրանցից գլխավորները՝ Էնվերը, Ջեմալը եւ Թալեաթը 1918 թվականին փախան արտասահման, եւ իհարկե ուր, եթե ոչ Գերմանիա:

Մուստաֆա Քեմալի «Նոր Թուրքիան», որը պնդում է, թե կապ չունի օսմանյան կայսրության հետ, շարունակում է աջակցել եւ նմանվել երիտթուրքերի կողմից իրականացվող քաղաքականությանը. «Նոր Թուրքիան» ստիպված է մերժել մեղադրանքները՝ պատանդ պահելով Ստամբուլի հայկական փոքրամասնությանը: Օրինակ գույքահարկը, որը կիրառվել է 1942 թվականին, զգալիորեն հարվածեց թե՛ հայ գործարարներին եւ թե՛ արդյունաբերողներին: 1955թ. սեպտեմբերի իրադարձությունները վնաս հասցրեցին նաև Ստամբուլի հայ համայնքին:

Մերժողական քաղաքականությունը տարածվեց բոլոր ԶԼՄ-ներով, մեծ կապիտալ ներդրվեց հանրային կապերում, եղան նվիրատվություններ գրողներին, գիտնականներին եւ լրագրողներին, եղան նույնիսկ սպառնալիքներ կառավարության կողմից: Երբ երրորդ երկրները ճանաչում են հայերի ցեղասպանությունը, ինչպես Ֆրանսին ճանաչեց 2001 թվականին, կամ փորձում են ճանաչել, ինչպես ԱՄՆ-ն կամ Բուլղարիան, ապա Թուրքիան համախմբում է իր բարեկամական կենտրոնները, արտասահմանի թուրք միգրանտներին կամ էլ ստեղծում մի շարք խնդիրներ Արեւմուտքի ռազմավարության համար կարելորագույն հարցերի շուրջ: Թուրքիայի վերջին հակազդեցությունը՝ կապված Ֆրանսիայի կողմից ցանկացած ցեղասպանություն քրեականացնող օրենքի ընդունման հետ, շատ բնորոշ էր Թուրքիայի «արձագանքելու» ձեւին: Բացի մեծ գումարներից, որ ծախսվում են, նաև

օգտագործվել է օգտագործվում են այլ մեթոդներ, ինչպիսիք են սպառնալիքներն ու ճնշումները, մինչև իսկ մտավորականների սպանություններ:

- Աքչամ Թաներ, թուրք պատմաբան, Թուրքիայի կողմից իրականացված ցեղասպանության մերժողական քաղաքականության քննադատ. աքսորվել է
- Հրանտ Դինք, հայ լրագրող, սպանվել է Թուրքիայի կողմից, 2007 թ. հունվարին
- Օրհան Փամուկ, որը 2006 թվականին արժանացավ գրականության Նոբելյան մրցանակի: Հայտնի է Անկարայի կողմից հայկական ցեղասպանության հանդեպ մերժողական քաղաքականության իր քննադատական դիրքորոշմամբ: 2005 թվականի փետրվարին օտարալեզու մամուլին հայտարարել էր, որ հայերի դեմ իրականացված հանցագործությունները պետք է քննարկվեն Թուրքիայում հասարակական կարծիք ձևավորելու համար: Այդ հայտարարությունների արդյունքը եղավ նրա՝ դատարան կանչվելը:

1990-ականների կեսերից սկսած Թուրքիան մերժողական արձագանք է տալիս հայոց ցեղասպանության հիմնադրույթները բացահայտելու ակադեմիական ներկայացուցիչների առաջարկին՝ համարելով այն քաղաքական խնդիր. հարցը թողնում է փորձագետների քննարկմանը: Այս նպատակով Թուրքիայի կառավարությունը պատրաստ է մասնակցելու «իմաստուն հանձնաժողովի» քննարկմանը, որը պետք է ձևավորվեր խնդրի պատմական դրույթները «ուսումնասիրելու» նպատակով, սակայն Թուրքիայի եւ Հայաստանի միջև փոխադարձ համաձայնությամբ միայն:

2000 թվականների Դավուդօղլուն եւ Էրդողանը փորձեցին քողարկել հայերի ցեղասպանությունը՝ «գրո խնդիր հարեւանների հետ» քաղաքականությամբ: Նշենք, որ ըստ Թուրքիայի արտաքին գործերի նախարարության կայքի՝ այդ, ինչպես պարզվեց՝ կեղծ քաղաքականության նպատակն էր լուծել բոլոր խնդիրները հարեւանների հետ կամ գոնե նվազագույնի հասցնել դրանք: Այս քաղաքականության շրջանակներում, իսկ ավելի լայն առումով՝ գազատարների անվտանգության պահպանման նպատակով Թուրքիան եւ Հայաստանը ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի ճնշման ներքո 2009թ.-ին ստորագրեցին երկու արձանագրություն՝ հայտնի որպես Տյուրիխի արձանագրություն: Սակայն երկրներից ոչ մեկը այն չի վավերացրել: Թուրքիան փորձում էր վավերացումը պայմանավորել իր շահերի բավարարման հետ՝ կապելով այն երկու հիմնական խնդրի՝ հայոց ցեղասպանության եւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հետ:

Իհարկե Դավուդօղլուի ջանքերով թուրքական դիվանագիտությունը այժմ էլ շարունակում է հիշողության սպանող: Որպեսզի կասեցնեն ցեղասպանության միջազգային ճանաչման հայկական սփյուռքի ջանքերը, թուրքերը մտադիր են 2015թ.-ին նշել Գալիպոլիի ճակատամարտի տարեդարձը: Այս կերպ նրանք փորձում են նվազեցնել Թուրքիայի նկատմամբ ցանկացած ճնշում՝ կապված հայկական ցեղասպանության 100 ամյա տարելիցի հետ:

Այժմ ժամանակն է, որ ներկայացնեմ հայ ժողովրդի, մասնավորապես հայկական սփյուռքի պայքարը:

### **3. Հայկական սփյուռքի պահանջները**

Երկար տարիներ թվում էր, թե հայերի ոչնչացմամբ եւ ԽՍՀՄ-ի կողմից Հայաստանի կլանմամբ, հայկական հարցն արդեն «լուծվել է»:

Իրավիճակը սկսեց փոխվել կես դար անց: Նշանակալից տարի էր 1965 թվականը, երբ ցեղասպանության 50-ամյակին զանգվածային ցույցերը ողջ աշխարհում՝ Արգենտինայից մինչեւ Խորհրդային Միություն, Շվեդիայից մինչեւ Յոհանեսբուրգ, մատնանշեցին, որ աշխարհի հայ գաղթականների երկրորդ սերնդի հիշողությունը դեռ ապրում է: Երեւանում խորհրդային տարիների համար իր նախադեպը չունեցող մեծ երթ տեղի ունեցավ, որում ներգրավվեց մեկ միլիոն մարդ, որոնք ամենի հետ մեկտեղ գոչում էին «մեր հողերը», այսինքն հասունացել էր ոչ միայն ցեղասպանության ճանաչման պահանջը, այլեւ Կարսի պայմանագրով որոշված սահմանների հարցը: Շատ մեղմ քայլերով խորհրդարաններն ու կառավարությունները սկսում են անդրադառնալ խնդրին եւ ընդունում են Ցեղասպանության ճանաչման տարբեր ձեւաչափեր, իսկ Ապրիլի 24-ն ընդունում են՝ որպես սեւ օրվա հիշատակման օր: Միեւնույն ժամանակ 1972 թվականին Լոս Անջելեսում Թուրքիայի հյուպատոսի սպանությամբ հայկական զինված խմբավորումները հայկական հարցը միջազգային ճանաչման են բերում՝ ազդելով միջազգային հանրության կարծիքի վրա: Այսինքն այն միայն արտաքինից էր թվում մոռացված: Շատ հերոսներ կային հայկական սփյուռքում, ովքեր մահապարտ դարձան աշխարհի տարբեր ծայրերում, մինչեւ իսկ Թուրքիայում, որպեսզի հնչեղություն հաղորդեն հայ ժողովրդի արդարացի պահանջին:

Տարբեր երկրներում ստեղծվեցին կազմակերպություններ, ինչպիսիք են Հայ Դատի Հանձնախումբը, որոնք պարտավորվեցին համակարգել բոլոր հայ համայնքների գործունեությունը՝ ճնշում գործադրելու այդ երկրների կառավարությունների նկատմամբ: Շատ դեպքերում օրինակ Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբը պայքարել է նաեւ հույներին վերաբերող հարցերում, ինչպիսիք են՝ Կիպրոսի եւ Մակեդոնիայի խնդիրները, որն այժմ տվյալ հարցի շուրջ քարոզում է՝ հենց Հայաստանում հանրային կարծիք ձեւավորելու համար:

Հաջողությամբ ավարտելով իմ ելույթի այս մասը, թույլ տվեք կիսվել ձեզ հետ հայկական հարցի միջազգայնացման ռազմավարության շուրջ իմ մտքերով, ինչն այսօրվա իմ ելույթի հիմնական մասն է:

### **4. Միջազգային հարաբերություններ եւ ճանաչում**

Մարդկության դեմ հանցագործությունը պահանջում է արդարադատություն, մի գաղափար, որը բնորոշ է հենց ժողովրդավարությանը: Ոչ մի ազգ, ոչ մի պետություն չի կարող ներկայանալ կամ համարվել որպես ժողովրդավար, եթե նա հրաժարվում է ճանաչել մարդկության դեմ իր կողմից հանդուրժած հանցագործությունները, եւ նույնիսկ հերքում է այն:

Սակայն քաղաքականության մեջ ընդհանրապես եւ միջազգային քաղաքականությունում մասնավորապես կան ազգային շահեր: Այդ իսկ պատճառով շատերը երես թեքեցին հայկական հարցից՝ նրա ի հայտ գալուն պես, Բեռլինի պատերազմից հետո: Պատերազմից հետո Ստալինը Վրաստանի անունից պահանջեց պատմական Հայաստանի տարածքները՝ Խորհրդային Միության համար, սակայն շուտով ձեռք քաշեց այդ ծրագրից՝ Սառը պատերազմի առաջադրած նոր պայմաններից ելնելով:

Վերջերս շատ կառավարություններ՝ կախված իրենց շահերից, շահարկեցին հայոց ցեղասպանության ճանաչման հարցը՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու նպատակով, կամ էլ Թուրքիային ԵՄ-ում չտեսնելու իրենց պատճառաբանության արդարացման համար: Ավելի հստակ դիրքորոշում ունի Ֆրանսիան, որը ընդունել է հայոց ցեղասպանությունը 2001թ.-ի հունվարի 29-ին:

Հայոց ցեղասպանության ճանաչման եւ հայկական հարցի խթանման գործում հայկական ջանքերն ու խնդիրները տարբերվում են 1991թ.-ին Հայաստանի անկախացումից հետո: Նրա մասնակցությունը բոլոր միջազգային կառույցներում որպես պետական մարմին լրացնում է այն բացը, որ գոյություն ուներ 1920 թվականից, երբ Խորհրդային Միության կազմում չունեի արտաքին քաղաքականություն ինքնուրույն իրականացնելու հնարավորություն:

Անկախ Հայաստանը, չնայած սկզբնական ֆինանսական դժվարություններին եւ Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից շրջափակմանը, Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ վարում է հավասարակշռված արտաքին քաղաքականություն, զարգացնում կայուն գործընկերային հարաբերություններ ինչպես ԵՄ-ի, այնպես էլ Մերձավոր Արեւելքի երկրների հետ; Հայկական սփյուռքի կազմակերպությունների հետ հարաբերությունները եւ նրանց գործունեության համակարգումը իսկապես հիանալի մակարդակի վրա են, նույնիսկ երբ կար տարածայնություն՝ կապված 2009 թվականի Արձանագրությունների հետ:

Ավելին, ցեղասպանության համաշխարհային ճանաչման գործընթացը պահանջում է ռազմավարության մշակում բոլոր առկա, բայց նաեւ նոր, հիմնականում մեղմ ուժի աղբյուրերի ստեղծմամբ, դրանց կազմակերպում եւ համակարգում:

Հայերը, հույները եւ այլոք, ովքեր տուժել են մարդկության դեմ նման հանցագործություններից, պետք է մտերմանան, նույնիսկ պարտավոր են համակարգված գործել՝ հիմնականում դասեր քաղելով Իսրայելցիների կատարած արդյունավետ ջանքերի հաջողությունից:

Սակայն համաշխարհային կոշտ ու ցինիկ քաղաքականությունում, ինչպես մեզ նախազգուշացրել էր Փուկիդիդեսը դեռ մ.թ.ա. 5-րդ դարում, արդարադատության մասին փաստարկներն արժեք ունեն միայն այնտեղ, որտեղ ուժերը հավասար են: Սա ենթադրում է, որ պետք է զարգացնենք ուժի գործոնները հայկական հարցի շուրջ՝ այդ թվում նաեւ ցեղասպանության ճանաչման գործում...

Սա չի նշանակում սակայն, որ արդարության հասնելու համար պետք է հիմնվենք միայն ուժի վրա. կարելու է նշանակալից են նաեւ համապատասխան ազդեցիկ քաղաքացիները, ժողովուրդներն ու կառավարությունների դերը:

«Այլեւս երբեք ցեղասպանություն»-ը շատ հստակ եւ ուժեղ ուղերձ է, որը կարող է կարգախոս լինել, քանի որ հանդուրժողականությունը, ինչպես նաեւ ցեղասպանության ժխտումը կարող է պատճառ դառնալ եւս մեկի: Բացի այդ, հենց

հայկական ցեղասպանությունը առիթ դարձավ Հիտլերի կողմից մարդկության դեմ նացիստական հանցագործությունների իրականացման համար. նա 1939թ.-ին հայտարարել էր. «Այսօր ո՞վ է հիշում հայերի բնաջնջումը»:

Ինչպես նշեցի, հայկական հարցում եւ հայոց ցեղասպանության ճանաչման գործում ամենակարեւոր հարցն այն է, որ Հայաստանը անկախ պետություն է, որն ունի կառավարություն եւ միջազգային ներկայացուցչություն: Հայաստանի կառավարությունը եւ սփյուռքը պետք է համակարգվեն: Ներկայիս կառավարությունը դեռ փառքի ճամփա ունի անցնելու՝ համագործակցելով կառավարությունների, միջկառավարական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների հետ, ինչպիսիք են օրինակ ԵՄ-ի կառույցները: Կազմակերպությունները, ինչպիսիք են Հայ Դատի Հանձնախումբը, կարող են փայլուն աշխատանք կատարել ինչպես քաղաքացիական հասարակությունում, այնպես էլ ՋԼՄ-ներում, ինտերնետում, աշխարհում:

Նրանց ակտիվացումը կարող է բերել հայկական հարցի հետագա զարգացմանն՝ իր բոլոր դրական դրսեւորումներով: Այդ հարցում անհրաժեշտ է հայկական մարդասիրական կազմակերպությունների ակտիվացումը հատկապես 2015թ.-ին, որպեսզի այն չհռչակվի որպես Գալիպոլիի ճակատամարտի, այլ արպես Ցեղասպանության տարելից:

Նույնը, իհարկե, վերաբերում է հասարակական կազմակերպությունների հետ տեղական իշխանությունների հետ հարաբերություններին: Կարող էր, օրինակ, սկսվել եղբայրության համակարգված քաղաքականության մշակում եւ իրականացում Հունաստանի կամ ԵՄ քաղաքաների միջեւ կամ նույնիսկ եվրոպական ծրագրերի շուրջ համակարգված համագործակցության քաղաքականություն, ինչը վերաբերում է տեղական ինքնակառավարմանը:

Վերջապես, կազմակերպությունները, որոնք զբաղվում են ցեղասպանության վերքերի բուժման եւ կանխարգելման խնդիրներով, կարող են եւ պետք է նպատակադրվեն Թուրքիայում իրականացված երեք ցեղասպանությունների (հայերի, ասորիների եւ հույների) ճանաչման ուղղությամբ, ինչպես որ տեղի ունեցավ Շվեդիայում:

Բացի կառավարություններից եւ հայկական կազմակերպություններից, գոյություն ունեն բարեկամ ազգեր եւ ժողովուրդներ, որոնք գործում են ազգային շահերից վեր: Երբեմն ժողովուրդների միջեւ լինում են դարավոր ընդհանուր ճանապարհներ, որոնք ապագայում ստեղծում են պայմաններ շատ մտերիմ, ազնիվ եւ անշահախնդիր հարաբերությունների համար:

Նման հարաբերություններ են ձեւավորվել հույների եւ հայերի միջեւ: Նրանք այնքան մոտ են հույներին, որ փոքրիկ հույն երեխան չէր կարողանում ոչ մի կերպ հասկանալ հույների եւ հայերի տարբերությունը, երբեմն տալով հետեւյալ հարցը. «Բայց չէ՞ որ նրանք էլ հույներ են, ինչու՞ ենք նրանց հայ անվանում»: Եվ ստանում էին հետեւյալ պատասխանը. «Նրանք ինչպես Կրետեի հույներն են, ինչպես Կիպրոսցիները...»:

Այդ հարաբերություններն իհարկե պետք է պահպանվեն եւ զարգանան: Երեք պետությունները՝ Հունաստանը, Կիպրոսը եւ Հայաստանը կարող են խթանել իրենց առեւտրային եւ հատկապես գիտական հարաբերությունները: Պետք է ամրապնդել ուսանողների փոխանակումներ եւ կազմակերպել աշակերտների հոսք դեպի

Հունաստան, որն ունի միջազգայնորեն ճանաչված ակտիվներ եւ «նոու հաու»<sup>1</sup>: Իհարկե կարելուորագույն մաս է կազմում զբոսաշրջությունը եւ հատկապես գիտական եւ կրոնական զբոսաշրջությունը:

Հունաստանը, Կիպրոսը եւ Հայաստանը, ինչպես նաեւ բոլոր կազմակերպությունները, պարտավոր են միասին աշխատել միջազգային կազմակերպություններում՝ սկսած առաջատար միջկառավարական կազմակերպություններից, ինչպիսին է ՄԱԿ-ը, մինչեւ ՄԱԿ-ի 1948թ.-ի ցեղասպանության մասին կոնվենցիայի հնարավոր վերանայումը:

Հունաստանը, Կիպրոսը եւ Հայաստանը պետք է համագործակցեն, որպեսի այլ երկրների հետ համատեղ խթանեն Հայաստանի եւ ԵՄ-ի միջեւ համագործակցությունը: Այդ համագործակցությունը կարող է լինել Հայաստանի եւ ԵՄ-ի անդամ-երկրների միջեւ արդեն ձեւավորված հարաբերությունների ամրապնդումը եւ հատկապես հայկական հարցի խթանումը եվրախորհրդարանում:

Ավելին, հայկական սփյուռքը պետք է պարբերաբար դիմի եվրոպական դատարան՝ Մարդու իրավունքների, ինչպես նաեւ գույքային իրավունքների եւ Թուրքիայում ապրող փոքրամասնությունների իրավունքների խնդիրներով: Նույնիսկ կարող է ցեղասպանությունց տուժածների բարեկամների միջոցով դատ հարուցել: Ի վերջո միջազգային կազմակերպությունների միջոցով Հայաստանը պետք է պահանջի Թուրքիայի միջոցով դեպի ծով դուրս գալու իր իրավունքը, քանի որ դեպի ծով ելք չունեցող երկրների մասին օրենքի համաձայն Հայաստանն ունի դրա իրավունքը:

Եզրափակելով հայկական հարցի քննարկումը իր բոլոր հիմնադրույթերով, նոր ուժի ստեղծման բոլոր հնարավոր միջոցներով, կայուն եւ երկարաժամկետ դաշինքների եւ միջազգային համագործակցության միջոցով, սա այն ռազմավարությունն է, որը մեկ այլ, ավելի երկար ճանապարհ է, սակայն որը կհանգեցնի ցեղասպանության համընդհանուր ճանաչման ավելի հեշտ ուղուն:

Տիկնայք եւ պարոնայք,

Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչումը կհարթի ճանապարհ դեպի իսկական ժողովրդավար երկիր: Հայոց ցեղասպանության ճանաչումը հայերի համար կլինի բարոյական, բայց նաեւ պատմական հատուցում:

Այն ժամանակ մենք չկարողացանք կանխել ցեղասպանությունը: Բայց այժմ մենք կարող ենք կանխարգելել հիշողութ ցեղասպանությունը: Այսօր մենք կարող ենք ապահովել եւ վերականգնել արդարության հանդեպ հարգանքը: Այսօր մենք կարող ենք ստեղծել պայմաններ հայկական հարցի արդար դատի համար, բայց նաեւ ժողովուրդների միջեւ խաղաղ գոյակցության եւ համագործակցության պայմաններ՝ հիմնված արդարության վրա:

Այսօր եկեք աջակցենք եւ հարգենք հայկական ծագում ունեցող մեր համաքաղաքացիների զգացմունքներն ու երազանքները: Ինչպես դա արեց Հունաստանի ներկայիս նախագահը Երեւանում: Ցեղասպանության ընդունումն ու դատապարտումը, եւ նրանց երկար տարիների նույնականացումը՝ դա նվազագույն աջակցությունն է այն մեծ աղետի դեմ, որ տեսան նրանք:

---

<sup>1</sup> Կարողություն, գործի իմացություն, պատրաստման եւ արտադրության գաղտնիք: Այն սովորաբար օգտագործվում է նորարարությունները ներկայացնելիս:



Իմ համակրանքն ու աջակցությունը ձեր հանդեպ հավերժ է, եւ վստահեցնում եմ, եւ դա գիտականորեն ապացուցված է, հիշողության դեմ բոլոր պատերազմները մատնված են անհաջողության: